ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՇԱՀՈՒՄՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու
մարզի Շահումյան համայնք, ՀՀ Լոռու մարզ, գ.
Շահումյան 1փ. 66, Հեռ. (0322) 3 84 62, 3 78 97 ,
shahumyan.lori@mta.gov.am

N Ե-106/18
10 ապրիլ 2018թ.

ՀՀ ԼՈՌՈՒ ՄԱՐԶՊԵՏԱՐԱՆ
ԼՈՌՈՒ ՄԱՐԶՊԵՏ
ԱՐԹՈՒՐ ՆԱԼԲԱՆԴՅԱՆԻՆ

Կից ներկայացնում եմ Շահումյան համայնքի ղեկավարի թիվ 26-Ա, 27-Ա, 28-Ա, 29-Ա, 30-Ա, 31-Ա, 32-Ա և 33-Ա որոշումները:

Առդիր 12 թերթ:

4/10/2018

X _____

Համայնքի ղեկավար՝ **Էդիկ Մանուկյան**

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՇԱՀՈՒՄՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Շահումյան համայնք
ՀՀ, Լոռու մարզ, գ.Շահումյան, (0322) 3 84 62, 3 78 97, shahumyan.lori@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

20 ՄԱՐՏԻ 2018թվականի N 33-Ա

ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՇԱՀՈՒՄՅԱՆ ՀԱՄԱՅՆՔՈՒՄ ԱՂԵՏՆԵՐԻ ՌԻՍԿԻ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ՍՏԵՂԾՄԱՆ ՄԱՍԻՆ

Աղետների ռիսկերի նվազեցման միջոցառումների կազմակերպման և իրականացման, արտակարգ իրավիճակներում գործելու ընթացակարգերի սահմանման, արտակարգ իրավիճակներում համայնքի բնակիչների պաշտպանության կազմակերպման նպատակով, ղեկավարվելով «Արտակարգ իրավիճակներում բնակչության պաշտպանության մասին» ՀՀ օրենքի 16-րդ հոդվածի դ) կետով, «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 12-րդ հոդվածի 1-ին մասի 12-րդ կետով.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ Ե Մ

1. Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Շահումյան համայնքում հաստատել.
1) Աղետների ռիսկի կառավարման (այսուհետ՝ ԱՌԿ) խորհրդի կազմը՝ համաձայն հավելված N 1-ի.
2) ԱՌԿ խորհրդի աշխատակարգը՝ համաձայն հավելված N 2-ի.

2. Խորհրդի անդամներին՝
1) մինչև սույն թվականի մայիսի 15-ը մշակել Լոռու մարզի Շահումյան համայնքի աղետների ռիսկի կառավարման պլանը.
2) յուրաքանչյուր տարվա փետրվարի 15-ը իրականացնել համայնքի ԱՌԿ պլանի ճշգրտում:

3. ԱՌԿ խորհրդի ղեկավարի տեղակալին՝ սույն որոշման 1-ին կետով ստեղծված ԱՌԿ խորհրդի ներգրավված յուրաքանչյուր անձի կամ անձանց փոփոխության դեպքում 5-օրյա ժամկետում ներկայացնել սույն որոշման փոփոխման վերաբերյալ որոշման նախագիծ:

Որոշումն ուժի մեջ է ստորագրման պահից:

Համայնքի ղեկավար՝ **ԷԴԻԿ ՄԱՆՈՒԿՅԱՆ**

2018թ. մարտի 20
գ.Շահումյան

Հավելված N 1
Շահումյան համայնքի ղեկավարի
«20» մարտի 2018թ-ի N 33-Ա որոշման

ԿԱԶՄ
ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՂԵՏՆԵՐԻ ՌԻՍԿԻ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԽՈՐՀՐԴԻ

Համայնքի ԱՌԿ խորհրդի կազմը՝

1. խորհրդի ղեկավար՝ Էդիկ Մանուկյան /համայնքի ղեկավար/,
2. խորհրդի ղեկավարի տեղակալ-տարհանման և պատսպարման պատասխանատու՝ Սոսյան Հրայր /համայնքի ղեկավարի տեղակալ/,
3. խորհրդի քարտուղար՝ Ռաիսա Մինասյան,
4. խորհրդի անդամներ՝
   1) ավագանի Արմեն Ղումաշյան,
   2) ավագանի Ելենա Հովհաննիսյան,
   3) ավագանի Հովհաննես Մանուկյան,
   4) ոլորտային պատասխանատուներ՝

ա. հրշեջ-փրկարարական աշխատանքների պատասխանատու՝ Հայկ Անդրեասյան,
բ. հասարակական կարգի պահպանման պատասխանատու՝ Համազասպ Բոչոյան,
գ. տրանսպորտային ապահովման պատասխանատու՝ Լևոն Դալլաքյան,
դ. կապի և տեղեկատվական փոխանակման պատասխանատու՝ Արմինե Դալլաքյան,
ե.բժշկական օգնության կազմակերպման պատասխանատու՝ Լուսինե Բաղդասարյան,
զ. կենսաապահովման կազմակերպման պատասխանատու՝ Աշոտ Մխիթարյան,
է. կոմունալ-էներգետիկ ապահովման պատասխանատու՝ Հովհաննես Անդրեասյան,
ը.ինժեներական միջոցառումների ապահովման պատասխանատու՝ Կարեն Սարգսյան,
թ. դիակների ճանաչման և հուղարկավորման կազմակերպման և հաշվառման պատասխանատու՝ Հայկ Շարմազանյան,
ժ. անհայտ կորածների և ընտանիքի անդամների միավորման, կորած/միայնակ մնացած երեխաների ու ծերերի հարցերով զբաղվող պատասխանատու՝ Սենիկ Մանուկյան:

Հավելված N 2
Շահումյան համայնքի ղեկավարի
«20» մարտի 2018թ-ի N 33-Ա որոշման

ԱՇԽԱՏԱԿԱՐԳ
ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՇԱՀՈՒՄՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՂԵՏՆԵՐԻ ՌԻՍԿԻ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԽՈՐՀՐԴԻ

1. ԱՌԿ խորհրդի աշխատակարգը

1) Սույն աշխատակարգով սահմանվում են (այսուհետ՝ Աշխատակարգ) Շահումյան համայնքի ԱՌԿ խորհրդի լիազորությունների և գործառույթների իրականացման ընթացակարգերը:

2) Համայնքի ԱՌԿ խորհրդի նիստերը գումարվում են Շահումյանի համայնքապետարանում, իսկ դրա անհնարինության դեպքում՝ ԱՌԿ խորհրդի ղեկավարի որոշմամբ:

3) Համայնքի ԱՌԿ խորհրդի նիստի ժամանակ քննարկվում են Համայնքի ԱՌԿ պլանի մշակման, ճշգրտման և խորհրդի անդամների կողմից բարձրացված հարցերը կամ Համայնքի ԱՌԿ պլանով սահմանված գործողությունների իրականացումը:

4) Համայնքի ԱՌԿ խորհրդի նիստի ժամանակ ԱՌԿ խորհրդի ոլորտային պատասխանատուները ներկայացնում են իրենց վերապահված ոլորտում կատարված աշխատանքները, առաջ եկած խնդիրները և առաջարկվող նոր միջոցառումները: Համայնքի ԱՌԿ պլանի մշակման, ճշգրտման ժամանակ պատասխանատու են իրենց ոլորտին վերաբերվող բաժինների համար, ինչպես նաև Համայնքի ԱՌԿ պլանի նախապատրաստական և արձագանքման մասերում իրենք կարգավորման ոլորտի միջոցառումների համար:

5) Համայնքի ԱՌԿ խորհրդի նիստերը գումարվում են տարվա ընթացքում առնվազն երկու անգամ, իսկ դրա անհնարինության դեպքում՝ ԱՌԿ խորհրդի ղեկավարի որոշմամբ:

6) Համայնքի ԱՌԿ խորհրդի նիստերը արձանագրվում են քարտուղարի կողմից և ներառվում են համայնքի ԱՌԿ պլանում:

1. ԱՌԿ խորհրդի նախապատրաստական գործառույթներն են՝

1) Համայնքի բնակչության, նյութական արժեքների պաշտպանության ապահովումը,

2) իրականացնում են համայնքի վտանգների, խոցելիության և կարողությունների բացահայտում,

3) ԱՌԿ պլանի մշակումը, իրականացման ապահովումը, վերահսկումը,

4) ԱՌՆ և աղետներին դիմակայելու կարողությունների զարգացումը,

5) Համայնքում ԱՌՆ միջավայրի և մշակույթի ձևավորումն ու դրանց տարածմանը,

6) աղետներին արձագանքման համակարգի ձևավորումն, այդ նպատակով փրկարարական, հրդեհաշիջման և անհրաժեշտ կենսապահովման միջոցների ձեռք բերման, կուտակման և նպատակային օգտագործման իրականացումը,

7) ԱՌԿ պլանի ինտեգրման ապահովումը համայնքի զարգացման ծրագրում,

8) համայնքի վաղազդարարման համակարգի ստեղծումն ու վերջինիս պահպանումը,

9) «Դիմակայուն համայնք» ստեղծելու նպատակով ԱՌՆ գործընթացներում ուսումնական հաստատությունների և բնակչության ակտիվ ներգրավվածության ապահովումը,

10) բնակչության համար արտակարգ իրավիճակներում վարքականոնների և պարտականությունների տարածումը, դրանց կիրառման ապահովումը,

11) նախապատրաստում է Համայնքի բնակչությանը կատարելու փրկարարական և հրդեհաշիջման պարզագույն աշխատանքներ,

12) իրականացնում է հրդեհների կանխարգելման աշխատանքներ՝ բնակչության իրազեկման և ուսուցման միջոցով,

13) կազմակերպում և անցկացնում է վարժանքներ:

2. ԱՌԿ խորհրդի արձագանքման գործառույթներն են՝

1) Համայնքի բնակչության ազդարարման իրականացումը,

2) Արտակարգ իրավիճակների ժամանակ տեղեկատվության փոխանակման իրականացումը,

3) Համայնքի բնակչության տարահանման իրականացումը,

4) կազմակերպում է հատուկ կարիքավոր մարդկանց, հղի կանանց և երեխաների անվտանգ տարահանումը/պատսպարումը,

5) իր իրավասության շրջանակներում կազմակերպում է որոնման, փրկման և հրդեհաշիջման աշխատանքներ,

6) կազմակերպում է բնակչության նյութական և հասարակական արժեքների պահպանությունը, անվտանգության ապահովումը փրկարարական գործողությունների և տարահանման վայրերում,

7) դիակապտության, թալանի, բռնության և այլ հանցավոր երևույթների կանխումը,

8) շինարարական աղբի տեղափոխումը,

9) ճանապարհների մաքրումը և նոր տարանցիկ ճանապարհների հիմնումը,

10) արտակարգ իրավիճակի հետևանքով առաջացած շինարարական աղբի մաքրում համայնքի տարածքից ու ճանապարհներից, նոր տարանցիկ ճանապարհների հիմնում, կամուրջների վերականգնում,

11) առաջին օգնության իրականացումը,

12) սանիտարահիգիենիկ և համաճարակային վիճակի հսկողություն,

13) բնակչությանը սննդով, ջրով, դեղորայքով և առաջին անհրաժեշտության պարագաներով ապահովումը,

14) ջրային և սննդամթերքի պաշարների կուտակումը և նպատակային օգտագործումը:

15) բնակչության կոմունալ-էներգետիկ ապահովումը,

16) տուժած տարածքների գազամատակարարման և էներգամատակարարման վերականգնման կազմակերպումը, անհրաժեշտության դեպքում առանձին հատվածներում դրանց դադարեցումը,

17) դիակների հուղարկավորման համար հողհատկացման և հուղարկավորման կազմակերպումը,

18) կորած, միայնակ մնացած երեխաների հայտնաբերումը, գրանցումը և ուղղորդումը համապատասխան սոցիալական ծառայություններ,

19) կազմակերպում է երեխաների վերամիավորումն ընտանիքներին:

20) աղետից հետո կազմակերպում է ստեղծված իրավիճակի, շենքերի, շինությունների, կամուրջների, թունելների և այլ առանցքային հանգույցների տեխնիկական վիճակի գնահատումը,

21) վնասի և կարիքների վաղ գնահատումը և հայտերի ներկայացումը մարզային կամ հանրապետական հանձնաժողովին:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՇԱՀՈՒՄՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Շահումյան համայնք
ՀՀ, Լոռու մարզ, գ.Շահումյան, (0322) 3 84 62, 3 78 97, shahumyan.lori@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

15 ՄԱՐՏԻ 2018թվականի N 32-Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՇԱՀՈՒՄՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՏԱՐԱԾՔՈՒՄ 2018 ԹՎԱԿԱՆԻ ԸՆԹԱՑՔՈՒՄ ՀՆԱՐԱՎՈՐ ՋՐՀԵՂԵՂՆԵՐԻ, ՀԵՂԵՂՈՒՄՆԵՐԻ, ՍԵԼԱՎՆԵՐԻ ԵՎ ՍՈՂԱՆՔՆԵՐԻ ԿԱՆԽԱՐԳԵԼՄԱՆ, ԴՐԱՆՑ ՀԵՏԵՎԱՆՔՆԵՐԻ ՆՎԱԶԵՑՄԱՆ ՈՒ ՎԵՐԱՑՄԱՆ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով ,,Արտակարգ իրավիճակներում բնակչության պաշտպանության մասին,, Հայաստանի Հանրապետության օրենքի16-րդ հոդվածի 1-ին մասի դ) կետով, ՀՀ նախագահի 1997թ-ի մայիսի 06-ի ,,ՀՀ մարզերում պետական կառավարման մասին,, թիվ ՆՀ 728 հրամանագրի 1.22 կետով, ի կատարումն Հայաստանի Հանրապետության Լոռու մարզպետի 08 փետրվարի 2018 թվականի թիվ 35-Ա որոշման՝

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ Ե Մ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Շահումյան համայնքի տարածքում 2018թվականի ընթացքում հնարավոր ջրհեղեղների, հեղեղումների, սելավների և սողանքների կանխարգելման, դրանց հետևանքների նվազեցման ու վերացման միջոցառումների կազմակերպման նպատակով.

1. Հաստատել Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Շահումյան համայնքի տարածքում 2018թվականի ընթացքում հնարավոր ջրհեղեղների, հեղեղումների, սելավների և սողանքների կանխարգելման, դրանց հետևանքների նվազեցման ու վերացման միջոցառումների պլանը՝ համաձայն հավելված 1-ի:
2. 1) Համայնքի 2018թվականի բյուջեում նախատեսել գումարներ՝ բնական երևույթների և տարերային աղետների կանխարգելմանը և հետևանքների վերացմանն ուղղված միջոցառումների համար և մինչև 15.03.2018թ. տվյալները ներկայացնել Լոռու մարզային փրկարարական վարչություն:
2) Յուրաքանչյուր ամիս մինչև այդ ամսվա 30-ը ներկայացնել տեղեկատվություն՝ կանխարգելիչ միջոցառումների իրականացման ընթացքի վերաբերյալ՝ համաձայն թիվ 2 հավելվածի:
3) Լոռու մարզային փրկարարական վարչություն ներկայացնել առաջարկություններ համայնքին սպառնացող պոտենցիալ վտանգավոր տեղամասերի և բնակչության անվտանգության ապահովման ուղղությամբ նախատեսվող միջոցառումների վերաբերյալ՝ համաձայն թիվ 3 հավելվածի:
3. Սույն որոշման կատարման հսկողությունը դնել Շահումյանի համայնքապետարանի աշխատակազմի առաջատար մասնագետի վրա:
4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

Համայնքի ղեկավար՝ **ԷԴԻԿ ՄԱՆՈՒԿՅԱՆ**

2018թ. մարտի 15
գ.Շահումյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՇԱՀՈՒՄՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Շահումյան համայնք
ՀՀ, Լոռու մարզ, գ.Շահումյան, (0322) 3 84 62, 3 78 97, shahumyan.lori@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

15 ՄԱՐՏԻ 2018թվականի N 31-Ա

ՇԱՀՈՒՄՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՍՈՑԻԱԼԱՊԵՍ ԱՆԱՊԱՀՈՎ ԸՆՏԱՆԻՔՆԵՐԻՆ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՏԿԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով "Տեղական ինքնակառավարման մասին'' Հայաստանի Հանրապետության օրենքի 38-րդ հոդվածի 7-րդ կետով, 48-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով, Շահումյան համայնքի ավագանու 13.04.2017թ-ի ,,ՀՀ Լոռու մարզի Շահումյան համայնքի կամավոր խնդիրները, կամավոր խնդիրներին ուղղված սեփական լիազորությունները և դրանց լուծման իրականացման կարգը սահմանելու մասին,, թիվ 15-Ա որոշմամբ, հիմք ընդունելով ստացված դիմումները, ՀՀ Լոռու մարզպետի 15.03.2018թ-ի թիվ 101/104.3.3/1534-18 գրությունը, Շահումյան համայնքի զոհված զինծառայողների, զինծառայողների ընտանիքների սոցիալական պաշտպանվածության բարելավման, պատերազմի վետերանների սոցիալական խնդիրների լուծման, հաշմանդամների, կերակրողին կորցրած ընտանիքների, սոցիալապես անապահով այլ խավերի սոցիալական պայմանների բարելավման վերաբերյալ դիմումները քննող հանձնաժողովի,, եզրակացությունը.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ Ե Մ

Շահումյան համայնքի 2018թ-ի բյուջեի բաժին 10, խումբ 7, դաս 1, հոդված 472900-ով նախատեսված գումարից թվով 3 անապահով ընտանիքներին հատկացնել սոցիալական օգնություն՝ համաձայն հավելվածի:

Համայնքի ղեկավար **ԷԴԻԿ ՄԱՆՈՒԿՅԱՆ**

2018թ. մարտի 15
գ.Շահումյան

Հավելված
ՀՀ Լոռու մարզի Շահումյան համայնքի ղեկավարի
2018 թվականի մարտի 15-ի N 31-Ա որոշման

ՑՈՒՑԱԿ

ՀՀ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՇԱՀՈՒՄՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԲՅՈՒՋԵԻՑ

ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅՈՒՆ ՍՏԱՑՈՂ ԲՆԱԿԻՉՆԵՐԻ

1. Պապյան Սրբուհի	30000 /երեսուն հազար/ դրամ, սոցիալական օգնություն
2. Շարմազանյան Ներսես	30000 /երեսուն հազար/ դրամ, սոցիալական օգնություն
3. Հարությունյան Ժորա	20000 /քսան հազար/ դրամ, սոցիալական օգնություն

ՇԱՀՈՒՄՅԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆԻ
ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՔԱՐՏՈՒՂԱՐ՝ Ռ. ՄԻՆԱՍՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՇԱՀՈՒՄՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Շահումյան համայնք
ՀՀ, Լոռու մարզ, գ.Շահումյան, (0322) 3 84 62, 3 78 97, shahumyan.lori@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

15 ՄԱՐՏԻ 2018թվականի N 30-Ա

06-084-0103-0032 ԾԱԾԿԱԳՐԻ ՏԱԿ ԳՏՆՎՈՂ ԲՆԱԿԵԼԻ ՏԱՆ. ՕԺԱՆԴԱԿ ԿԱՌՈՒՅՑՆԵՐԻ ԵՎ ՀՈՂԱՄԱՍԻ ՆԿԱՏՄԱՄԲ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ՎԵՐԱԿԱՆԳՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Տեղական ինքնակառավարման մասին ՀՀ օրենքի 43-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետով, ՀՀ Քաղաքացիական օրենսգրքի 188-րդ հոդվածի 2-րդ կետի 4-րդ հոդվածով, Իրավունք հաստատող փաստաթղթերը չպահպանված անհատական բնակելի տների կարգավիճակի մասին ՀՀ օրենքի 2-ին և 3-րդ հոդվածներով, ՀՀ ՀՕ 60-րդ և 64-րդ հոդվածներով, Ինքնակամ կառուցված շենքերի, շինությունների և ինքնակամ զբաղեցրած հողամասերի իրավական կարգավիճակի մասին ՀՀ ՀՕ 510-Ն օրենքի 7 հոդվածի 1 կետով, ՀՀ կառավարության 2005թ. Դեկտեմբերի 29-ի թիվ 2387-Ն որոշմամբ, հիմք ընդունելով քաղաքացի Սերժիկ Գասպարյանի դիմումը, 14.03.2018թ-ի N 290 գրանցամատյանում գրանցված լիազորագիրը, հողային բարեփոխումների և սեփականաշնորհման տեղական հանձնաժողովի 25.04.1991թ. թիվ 8 որոշումը, ՄԵԼ ԵՎ ՄԻԼ գեոդեզիայի և քարտեզագրության կենտրոն ՍՊԸ-ի կոմից կազմված հատակագիծը.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ Ե Մ

1. Վերականգնել և օրենքի ուժով ճանաչել 06-084-0103-0032 ծածկագրի տակ գտնվող 0.05293հա բնակելի տան կառուցման և սպասարկման հողամասի և հողամասում գտնվող այլ անձանց իրավունքներ և օրենքով պահանջվող շահերը չխախտող, առանց քաղաքաշինական նորմերի ու կանոնների էական խախտումներ իրականացրած և հարկադիր սերվիտուտ պահանջելու իրավունք չառաջացնող 1965թ. կառուցված 103.54քմ. մակերեսով բնակելի տան, 7.63քմ մակերեսով ջրավազանի, 8.97քմ մակերեսով զրուցարանի և 11.22քմ մակերեսով պարիսպի նկատմամբ Անատոլիյա Սուրենի Շահվերդյանի /ծնվ. 25.06.1939թ./ սեփականության իրավունքը:
2. Սույն որոշման 1-ին կետում նշված հողամասից հատկացած 0.05հա հողամասն անհատույց սեփականության իրավունքով վերահատկացնել, իսկ հատկացվածից ավել զբաղեցրած 0.00293հա հողամասի նկատմամբ օրենքի ուժով ճանաչել Անատոլիյա Սուրենի Շահվերդյանի /ծնվ. 25.06.1939թ./ սեփականության իրավունքը:
3. Անշարժ գույքը չի գտնվում ՀՀ ՀՕ 60-րդ հոդվածով սահմանված հողամասերի ցանկում, չի հակասում քաղաքաշինական նորմերին, չի առաջացնում սերվիտուտ:
4. Հողամասի սահմանները որոշվում են համայնքի ղեկավարի կողմից հաստատված հատակագծով:
5. Անշարժ գույքին տրամադրել փոստային հասցե՝ 5 փող. 33 տուն:
6. Սույն որոշումը ենթակա է պետական գրանցման ՀՀ կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի Լոռու մարզային ստորաբաժանումում:

Համայնքի ղեկավար՝ **ԷԴԻԿ ՄԱՆՈՒԿՅԱՆ**

2018թ. մարտի 15
գ.Շահումյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՇԱՀՈՒՄՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Շահումյան համայնք
ՀՀ, Լոռու մարզ, գ.Շահումյան, (0322) 3 84 62, 3 78 97, shahumyan.lori@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

15 ՄԱՐՏԻ 2018թվականի N 29-Ա

ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻՆ ՓՈՍՏԱՅԻՆ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով 'Տեղական ինքնակառավարման մասին' ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 22-րդ կետով, ՀՀ կառավարության 29.12.2005թ-ի թիվ 2387-Ն որոշմամբ հաստատված կարգի 48 կետով՝

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ Ե Մ

Շահումյան համայնքում գտնվող Հենրիկ Սարգսի Զոբանյանին, Թամարա Նիկոլայի Հովսեփյանին, Արտակ Հենրիկի Զոբանյանին, Արայիկ Հենրիկի Զոբանյանին և Արկադի Հենրիկի Զոբանյանին ընդհանուր համատեղ սեփականության իրավունքով հատկացված բնակարանին (Շահումյանի գյուղապետի 25.11.1999թ-ին ,,Բնակարանի սեփականաշնորհման մասին,, 22 որոշում, նախկին հասցեն՝ գյուղ Շահումյան թիվ 2 շենքի թիվ 27 բնակարան) տրամադրել Շահումյան համայնք 1 փող. 57 շենք 27 բնակարան փոստային հասցե:

Համայնքի ղեկավար՝ **ԷԴԻԿ ՄԱՆՈՒԿՅԱՆ**

2018թ. մարտի 15
գ.Շահումյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՇԱՀՈՒՄՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Շահումյան համայնք
ՀՀ, Լոռու մարզ, գ.Շահումյան, (0322) 3 84 62, 3 78 97, shahumyan.lori@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

15 ՄԱՐՏԻ 2018թվականի N 28-Ա

ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻՆ ՓՈՍՏԱՅԻՆ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով 'Տեղական ինքնակառավարման մասին' ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 22-րդ կետով, ՀՀ կառավարության 29.12.2005թ-ի թիվ 2387-Ն որոշմամբ հաստատված կարգի 48 կետով՝

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ Ե Մ

Շահումյան համայնքում գտնվող Վոլոդյա Գուրգենի Սարիբեկյանին սեփականության իրավունքով պատկանող բնակարանին (սեփ. իրավունքի վկայական N 1749664 տրված 23.06.2003թ., նախկին հասցեն՝ գյուղ Շահումյան թիվ 2 շենքի թիվ 26 բնակարան) տրամադրել Շահումյան համայնք 1 փող. 57 շենք 26 բնակարան փոստային հասցե:

Համայնքի ղեկավար՝ **ԷԴԻԿ ՄԱՆՈՒԿՅԱՆ**

2018թ. մարտի 15
գ.Շահումյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՇԱՀՈՒՄՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Շահումյան համայնք
ՀՀ, Լոռու մարզ, գ.Շահումյան, (0322) 3 84 62, 3 78 97, shahumyan.lori@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

14 ՄԱՐՏԻ 2018թվականի N 27-Ա

ՀՈՂԱՄԱՍԻ ԵՎ ՇԻՆՈՒԹՅԱՆ ԳՈՐԾԱՌՆԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ՓՈՓՈԽՄԱՆ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Տեղական ինքնակառավարման մասին ՀՀ օրենքի 43-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ և 4-րդ կետով, ՀՀ Հողային օրենսգրքի 64-րդ հոդվածով, հիմք ընդունելով ՀՀ տարածքում ըստ նպատակային նշանակության շենքերի և շինությունների դասակարգման 26.05.1998թ-ի թիվ 108-Կ հրամանը, ՀՀ կառավարության 24.12.2003թ-ի թիվ 1746-Ն որոշումը, Շահումյան համայնքի ավագանու 06.03.2018թ-ի թիվ 09-Ա որոշումը և N 25022014-06-0048 անշարժ գույքի նկատմանբ իրավունքի վկայականը.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ Ե Մ

1. Շահումյան համայնքի 2-րդ փող. 1 փկղ. 9 հասցեում գտնվող անշարժ գույքից 2 պահեստի - 179,88 քմ, 4 պահեստի - 85,65 քմ, 5 պահեստի - 48,03 քմ գործառնական նշանակությունը փոփոխել անասնաշենքի: Շինության գործառնական նշանակությունը փոփոխված է առանց ճարտարապետահատակագծային առաջադրանքի տրամադրման, քանի որ գույքի նկատմամբ փոփոխություններ չեն կատարվել:
2. Հողամասի գործառնական նշանակությունը փոփոխել գյուղատնտեսական, արտադրական օբյեկտների հողամաս:
3. Հողամասը չի գտնվում ինժեներատրանսպորտային օբյեկտների օտարման կամ անվտանգության գոտիներում, չի գտնվում ՀՀ ՀՕ 60-րդ հոդվածով սահմանված հողամասերի ցանկում, հողամասի սեփականության իրավունքի ճանաչումը չի սահմանափակում այլ անձանց իրավունքները և (կամ) չի առաջացնում սերվիտուտ:
4. Հողամասի նկատմամբ սեփականության իրավունքը փոխանցված է 04.10.2005թ-ի թիվ 199-Ն օրենքի 23-րդ հոդվածի պահանջների համաձայն, պայմանով՝ գույքի հետագա օտարման գործարքներից ծագող իրավունքների պետական գրանցումը կկատարվի վճարման պահին գործող հողամասի կադաստրային արժեքի վճարման անդորրագիրը ներկայացնելու դեպքում:
5. Հողամասի կադաստրային գնի նկատմամբ կիրառվում է լրացուցիչ նվազեցնող 0.6 գործակից:
6. Սույն որոշումից ծագող իրավունքները ենթակա են պետական գրանցման ՀՀ կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի Լոռու մարզային ստորաբաժանումում:

Համայնքի ղեկավար՝ **ԷԴԻԿ ՄԱՆՈՒԿՅԱՆ**

2018թ. մարտի 14
գ.Շահումյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՇԱՀՈՒՄՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Շահումյան համայնք
ՀՀ, Լոռու մարզ, գ.Շահումյան, (0322) 3 84 62, 3 78 97, shahumyan.lori@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

14 ՄԱՐՏԻ 2018թվականի N 26-Ա

ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻՆ ՓՈՍՏԱՅԻՆ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով 'Տեղական ինքնակառավարման մասին' ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 22-րդ կետով, ՀՀ կառավարության 29.12.2005թ-ի թիվ 2387-Ն որոշմամբ հաստատված կարգի 48 կետով՝

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ Ե Մ

Շահումյան համայնքում գտնվող Վոլոդյա Տիգրանի Ղումաշյանին, Անուշ Մարտիրոսի Մարտիրոսյանին և Արմեն Վոլոդյայի Ղումաշյանին ընդհանուր համատեղ սեփականության իրավունքով պատկանող բնակարանին (սեփ. իրավունքի վկայական N 1749668 տրված 23.06.2003թ.նախկին գ.Շահումյան թիվ 2 շենքի թիվ 11 բն.հասցե) տրամադրել գ. Շահումյան 1 փող. 57 շենք 11 բնակարան փոստային հասցե, իսկ նույն անձանց պատկանող 06-084-059-016 ծածկագրի տակ գտնվող 0.0618 հա բնակավայրի հողամասին և նրա վրա կառուցված անասնաշենքին և ծածկարանին տրամադրել գ. Շահումյան 10 փող. 1 նրբ. 6 փոստային հասցե:

Համայնքի ղեկավար՝ **ԷԴԻԿ ՄԱՆՈՒԿՅԱՆ**

2018թ. մարտի 12
գ.Շահումյան